

5-6 թիվ

ՔԱՆՔԱՆՈՒՄ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
 Պոչխարից համար 10 Ձ  
 Տարեկան 10 Ձ  
 Վեցամսեայ 5 Ձ  
 Արտասահմանի հա-  
 մար տարեկան 12 Ձ  
 Վեցամսեայ 6 Ձ  
 ԿԱՆՈՒՄ ԿՃԱՐԵԼԻ  
 —(—)  
 Գրութիւնք եւ չեմ տրուիր  
 —(—)  
 Իրանացիներու տողը 20 սան-  
 քիւն է. երեքին աւելի սե-  
 զաններու համար 20 ՕՊ  
 գեղջ կրչայ:

# ՇՄԱԲԹ

Կամակ եւ զրամ որդի  
 Խմբագրութեան հասցիքն.

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoun»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՄԱԲԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 Адвокатъ

## ՄԵՐ ՕՈՒԿԱՆՆԵՐԸ

—(—)

Օուկան կը կոչուի այն թերթը որ ամբողջ կուսակցութեան մը գաղափարները, իդէալը, ձգտումները կը պատկերացնէ հանրութեան առջեւ:

Հետեւաբար օուկանի մը խմբագրութիւնը բոլորովին կրտսերական գեր մը կը կատարէ. և իր անձնական գաղափարները չեն որ կը տիրապետեն թերթին մէջ, այլ «ամբողջութեան» գաղափարներն է զոր ինք միայն կը բանաձևէ: Եթէ օուկանի մը խմբագրապետը լաւ մը չէ ըմբռնած իր պարտքը, պարտաւոր է իր գրելիք ամէն մէկ յօդուածին համար յատուկ շրջաբերականներով կուսակցութեան անդամներուն հաւանութիւնը խնդրել. հակառակ պարագային երբ իր անձնական կարծիքներն է որ կը թափէ հանրութեան առջեւ, խմբագիր մը դատապարտելի կը դառնայ, իսկ կուսակցութեան անդամները ծաղրելի:

Ճաշակ է ըսել որ մենք շատ հեղ այդ գրութեան մէջ ենք: Օուկանի խմբագիրը ամէն բան է մեր մէջ: Այնպիսի խոհարար մըն է որուն պատրաստած ամէն պահանջը ընդունելի են իր յաճախորդներուն, նոյն իսկ երբ անոնք թունալից ըլլան:

Մեր մէջ ամէն կուսակցական մարդ, «իբր» օուկանը չըբացած՝ համարիտ է պարունակութեանը: Հլու, կոյր հետեւողն է անոր: Իր աւագ պարտականութիւններէն մէկը կը նկատէ այդ բանը. թէեւ սրտին խորէն գուցէ բոլորովին ներհակը կը մտածէ: Աւելիք ներքին մտնայ՝ պատասխան մը միայն ունի զոր իր արդարացումը կը նկատէ:

—Այսպէս՝ գրեր են նէ հարկաւ բան մը գրանքն...

Ինք, գերազանց արձագանքն է խմբագրապետին, անոր բարեկամները իրեններն ալ են, ու թշնամիներուն ահաւելի թշնամի: Յիմար պայքարներ կը մղէ, իր շրջանակին մէջ, թէեւ խնդրէն անսեղեակ, գրուածքին միայն

մակերեւոյթային պարագաներովը զինուած և միշտ գաղափարը սեւեռած «հարկաւ բան մը գրանքն» ինք վրայ, որ մութի մէջ մնացած ճշմարտութեան լրացումն է իրեն համար, ամբողջ ճշմարտութիւնն է:

Իրեն փոյթը չէ գիտնալ թէ ի՞նչ հաշիւներէ առաջնորդուած է զորով. և նոյն իսկ եթէ բաւական արթնամիտ ըլլայ կիսովին թափանցելու անոնց մէջ, զարձակ համարիտ կը հանդիսանայ, իր սկզբունքները կը զոհէ անոնց համար, պաշտածը կայրէ, և ինքզինքը և ուրիշները կը ջանայ համոզել թէ ճիշդ ու ճիշդ իր իդէալը են որ պատկերացած են «օուկանին» մէջ:

Կոյր հետեւողութեան այս ձգտումը նուազագուցեղ է ամէն բանաւոր էակի, և բարոյական անկումէ զատ ստակալի աւերումներ կը գործէ անվրէպ ազդի մը մէջ:

Օուկաններուն մէջէն իբրև օրինակ վերցնենք «Մարտ»ը Այդ օուկանը որ իր կոչումով յեղափոխութեան հուրը արծարծելու սահմանուած է մեր մէջ, հեռի յուսալիր, եռանդուն սող մը պարունակել է, վերէն վար ծեփուած է խմբագրապետին անձնական բանակալներովը:

Ուրիշ կուսակցութեան մը դէմ անարդանքներ կը տեղայ, և ամենէն կընդունուին այդ անարգանքները:

Ռուսահայերը իբրև հրէշներ կը ներկայացուին. համարիտ ամէնքը:

Ամբողջ թերթը կիւրճեան-իւսիւֆեանով կը լեցուի, գործը յեղափոխութենէն ելլելով անձնական պարտաւորի կը վերածուի: Ի՞նչ փոյթ, «հարկաւ բան մը գրանքն»: Երբեմն թերթը ճշմարիտ զուեշտութիւն մը հովերը կառնէ. և ո՛չ մէկ վերահաշիւան բողոք չըբարձրացներ և չհարցներ խմբագրապետին:

—Պարոն, լինցա՞ւ, յեղափոխութիւն պիտի ընենք թէ խնդկատակութիւն:

Երբ ձանկիւլեան Աքեայէն վերագրուած, կը յիշեմ այն ատեն-

ուան անվերնագիր թերթին մէջ Պ. Ա. Ա. ի մէկ գողարիկ գրութիւնը որուն մէջէն արտրականը իբր ճշմարիտ հերոս մը դուրս կը ցայտէր: Իր յանգուզն քայլով հոյ յեղափոխութեան բուն գաղափարը բացողը և կայն հրաշակողն էր անիկա:

Ամէն հայ արդէն շատոնց յարգանքով խոնարհած էր Հայաստանի այդ զաւակին քաջութեան առջեւ. թերթին պերճախօս սողերը միայն նոր թարմութիւն կուտային անոնց: Օգտակար բան էր այդ: Չկայ բան մը որ յեղափոխականին թեւ ու թռիչ տայ քան «օրինակը»: Այդ օրինակներն են որ կը ծնին բուն հերոսները, որ մահուան նուիրուած մոլեռանդներ կարտագրեն Այնքան քաղցր կը հնչէին հայ արթնութեան նուիրուած այդ քանի մը սողերը, և որքան աւելի վերակազմեալ Հնչակեաններու ունեց օուկանը առաջինը կը հանդիսանար այդ ներքողը հիւսող:

Ի՞նչու համայնափ ընել կաշխատիք հասարակութիւնը: Մենք և մեզ հետ շատեր անշուշտ ձեր գրութեանց ազդեցութիւնը չենք կրեր, երբ այնքան ակնբերան անձնական կրքերէ թերադրուած են: Մեզ համար ձանկիւլեանը որքան ալ անմշակ մէկը եղած ըլլայ, գործնական յեղափոխութեան առաջին և ամենէն փայլուն օրինակը տուողներէն մէկը պիտի մնայ, քաջ մը պիտի մնայ Բայց գեղախոսաբար երգուեալ կոյրերը կան որոնք ձեր վերջին գրութեան վրայ պիտի հաւատան թէ 90ի ձանկիւլեանը երբեք գոյութիւն ունեցած չէ, թէ հասարակութիւնը ապուշ մը եղած է կայն յարգելով, թէ «այդ բան-թօֆլաճի» այդ անարգելի շրտավաճառը Մայր-Եկեղեցիին մէջ «ձեծ ուտելով» է որ զրգուած է, «գրգռուելով» է որ Պատրիարքարանի մէջ այդ պատմական յանդգնութիւնը գործած է. թէ «պատասխանելով» համար է որ պատրիարքին կառքը մտած է: Այս անմիտ և ծաղրելի վերլուծումը եղև մըն է պարզապէս:

Տեսնենք, վերակազմեալ հըն-

չակեանները հիմակ ալ պիտի ընդունին ձանկիւլեանի ապուշ մը ըլլալը ինչպէս ասկէց առաջ անոր հերոս ըլլալն ընդունած էին, թէ քաջութիւն պիտի ունենան պտուալու այդ թերթը խմբագրողներուն:

—Ա՛լ բաւական է, մի՛ խնդար թերթէք, մի՛ ստէք, «մեր» օուկանը պարզ պարտաւորի, զաւելտաթերթի մի՛ վերածէք, ա՛լ կամչնանք կոր ձեր ըրածներէն. անխախտ կեցէք «մեր» նպատակին գծած սահմանին մէջ, որ է սէր, բարեկամութիւն, ինքնավստահութիւն սփռել հայութեան մէջ, ազատութեան սէրը անշէջ պահել անոնց մէջ, հայրենիքի փրկութեան գործին մտածել, միայն անոր նուիրուիլ...

Օուկանի մը և մասնաւոր թերթի մը մէջ ահագին անշրպեւտ մը կայ: Օուկանի մը դերքը որքան բարձր այնքան ալ փափուկ է, և ահագին պատասխանատուութեան ենթակայ:

Իր գրած ամէն մէկ բառը կը շուռուած, չափուած պէտք է ըլլայ: Զգացնենք անոնց իրենց պարտքը, եթէ իրենք այդ տարրական պարտքին զգացումէն զուրկ են: Թոյլ չտանք որ ուղիղ գծէն չեղին, որ մեր կողմէն՝ մեր չուզած, մեզ ատելի բաները խօսին, և իրենց հաշիւներուն համեմատ կարեն թափեն: Պահ մը չգաղթինք հսկելէ մեր օուկաններուն վրայ՝ Մարտ, Հնչակ, Իրօշակ և կամ Արարատ ըլլայ անոնց անունը: Այս աշխուրջ հսկողութիւնը մեր իրաւունքն է. իրաւունքէն աւելի մեծ բան մըն է, ողջմտութեան և ազգասիրական պարտականութեան անմիջական մէկ պահանջը:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

«ՄԻՈՒԹԻՒՆ» ԹԵՐԹԸ

Աթէնք հրատարակող Միտրիլե թերթին խմբագրութիւնը կը խնդրէ մենէ ձանուցանել թէ եռամսեայ զաղարու մը պիտի ունենայ այդ թերթ և թէ Գ. տարեշրջանի Ա. թիւը (23) պիտի լոյս տեսնայ սեպտեմբերի սկիզբը:

—(—)

Public House Targovishte No. 4  
 Varna (Bulgaria)

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Կ Ի Ո Ջ Դ Ե Ր Ը

—) (—

Տարակոյս չկայ թէ ժողովրդի մը անհատական և հանրային բարօրութիւնը կը բխի ամենէն առաջ և ամենէն աւելի ընտանեկան յարկէն, որուն վրայ կերտուած է մարդկային ընկերութեան հրաշագեղ շէնքը, և նոյն համեմատութեամբ կազդէ ժողովուրդի մը բարոյական և նիւթական կեանքին վրայ:

Ընտանիքը մարդկային ազգի այն նախնական կրթարանն է ուր բնութեան դաստիարակն է կինը և ինքնին հասկնալի է թէ որչափ վեհ և բարձր է անոր դերը մարդկութեան բարոյական և նիւթական բարեկեցութեան գործին մէջ: Դեր մը որքան նուիրական ընտանեկան յարկի մէջ՝ իբրեւ հիմ, նոյնքան վսեմ հանրային կեանքի մէջ՝ իբրեւ դաստիարակ:

Հին դարերու մէջ երբ տակաւին ոչ գիտութիւններն ու արուեստները և ոչ ալ հարստութիւն ու ազգատութիւն այսչափ հսկայ քայլեր առած էին, կինը, պարզ ու բնական, իր բոլոր կանացի արժանիքը՝ ու մտքի ու սրտի յատկութիւնները կաշկանդուած, այդ մարդուն հաճոյքին և զուարճութեան մէջ սարքը միայն նկատուած էր: Սակայն այս աւանդական բռնաբարումը բնական օրէնքի համապատասխան չէր և կինը չհանդուրժեց զայն: Քաջութեամբ կռուեցաւ իր իրաւունքին համար

ու տակաւ ձեռք բերաւ իր ազատութիւնը: Եւ այժմ անկարելի է թուել այն անհուն օգուտները, զորս կինը տուաւ ընկերութեան, երբ մշակութեան անոր բնական յատկութիւնները, երբ զարգացաւ՝ ընդարձակուեցաւ: անոր կանացի բնազդը: Աշխարհի պատմութիւնը կը սորվեցնէ մեզ թէ նիւթական կարողութեան բարձրագոյն աստիճաններուն հասած են այն ազգերը, որոնք գիտցած են զնահատել կնոջ արժանիքը և նպաստել անոր զարգացման կարեւոր գործին: Կը հետեւի թէ ազգերու ընկերական և անտեսական վիճակը սերտ յարաբերութեան մէջ է՝ նոյն ազգի գեղեցիկ սեռին զարգացմանը հետ:

Ձարգացած կին մը իր համբերատար և խնայող բնատրութեամբ աւելի լուր կը մաքառի ընտանեկան թշուառութեան դէմ քան այդ մը իր բոլոր այրական ուժերովը: Եւ գիտուած է թէ ընտանիքներու նիւթական երջանկութիւնը այդ մարդու վաստակին արդիւնքը եղած չէ այնչափ՝ որչափ առաքինի կնոջ խնայողութեան հետեւանքը: Լաւ շահիլը միայն բաւական չէ պէտք է լաւ խնայել: Եւ շուայլութիւնը մէկ հարուածով կրնայ քանդել տապալել այն ընտանեկան երջանկութիւնը, զոր աշխատութիւնը կանգնած էր բուն և երկար ճիգերով:

Կնոջ դերը՝ մարդկային ազգը արդիւնաւորելու մէջ նուսմանափակուած չէ միայն, և կնոջական բնազդը մարդու ընկերական և անտեսական երջանկութեան մատակարարն է:

Մարդկային ընկերութեան նշանաւոր հետազոտիչներէն մէկը — կարծեմ Պալլաք — ըսած է թէ «այդ մարդուն կեանքը յաւիտենական գործունէութիւն պիտի ըլլայ, իսկ կնոջ կեանքը յաւիտենական ողջակէզ մը»: և արդարեւ ժիր խնայող և անձնուէր կին մը իր ընտանիքին ողջակէզն է. ու կարօտութիւնը երբեք չպիտի կրնայ ներս սպրդիլ այն տան սեմին, ուր այլը գործող է և կինը խնայող: «գործունէութիւն» և «խնայողութիւն» մեր ապրուստի ու կեանքի երկու անհրաժեշտ պայմաններն են և չքաւորութեան ու թշուառութեան դէմ ինչ հիանալի ուժ երբ այդ երկուքը դաշնակցին:

ՏԻԳՐԱՆ ԱՃԻՄԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եորք, 30 Յունիս

ԺՁ. դարու ճոխապանծ, գոռող ու անզուժ գառթիլեան ազգին ներկայ դրութիւնը դառն և յուսահատական է: Սպանիան իրօք իր ըլլալ և չըլլալու ճակատագրական ընդհանրութիւն մէջն է:

Շատ քիչ անգամ ազգ մը այսօր անհատաւոր թշնամի մը ունեցած է իր դէմ, որքան Սպանիան ունի այսօր, Միացեալ Նահանգները: Չիտուարական ուժով, նիւթական անհատնում կարողութիւնով, մտքի ճարտարութիւնով և անզուգական հերոսներու գործերով Միացեալ Նահանգներու երիտասարդ, ուժեղ ու ճարտար ազգը կը գերա-

զանցէ, համեմատապէս տկար, սնանկացած, փտած ու թռնակալութեան մնացորդ սպանիական ազգը:

Եւ Սպանիան ոչ միայն կը մաքառի այս գերազանց ուժին դէմ, այլ դարերէ ի վեր իր հալածած, չարչարած, կողոպտած գաղթական հպատակներն ալ, արդար վրէժխնդրութեամբ վառուած, Միացեալ Նահանգներու բանակներուն հետ կը յարձակին քայքայուող Սպանիոյ վրայ: Եւ Սպանիա կզգայ որ ալ իր լոյսը կը մարի, յուսահատական ճիգեր կընէ ազատուելու. ի դուրս: Այս տարին չը վերջացած, հաւատարմութեան այս երկիրը կը գանձէ իր արժանի պատիժը. և դարերէ ի վեր ճնշուող ազգերն ալ կստանան իրենց արժանաւոր վարձքը... ազատութիւններն:

Ս.Ա.Ն. Բիկացի ծանօթ նաւապետ հերոս Հրչիսընը տակաւին գերի է սպանիական բերդին մէջ:

Ամերիկեան կառավարութիւնը առաջարկեց Մատրիտի կառավարութեան որ Հրչիսըն և իր եօթը ընկերները սպանիական ութը պատերազմական գերիներու հետ փոխանակուին. Սակասթայի դահլիճը ձգձգողական պատասխան տուաւ: Մասնաւորաբար զօր. Պլանքօ, Քուպայի կառավարիչը, կը հակառակի Հրչիսընի փոխանակութեան ու կը պնդէ որ Հրչիսընի վայելուչ տեղը Մօրօի բերդին մէջն է. այսօր «Պօսթօն Կըլօպ» թերթը կըսէ թէ «Զօր. Պլանքօ և Սպանիան կը սխալին կարծելով որ հերոսութիւնը և քաջագործութիւնը տարափոխիկ են, ու այս պատճառով Հրչիսընը

ՎԱՐԴ-ՊՍՏԻԿՈՎԻ ԳԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (22)

Այդ անդամներից աչքի ընկնողներն էին Մուրաա և Դլճեան: Մուրաաը կատարեալ կերպով յեղափոխական էր, բառի բուն նշանակութեամբ և բնական խելքով: Դլճեանը անձնուէր գեղարվեստ երկրասարդ, որը մեծ ապագայ էր խոստանում: Դամաստեանը ինձ երեւում էր թուլամորթ, դանդաղաշարժ և շատ ծանր ու բարակ մտածող, այնուամենայնիւ ամենից զարգացածը և ամենից շատ ստացական մասաւոր պաշարով:

Միւսները բոլորն էլ սովորական մարդիկ էին և բոլորովին համապատասխան այն մեծ գործին, որը ընկած էր մեր ուսերի վրա: Ես աւելի մտեցայ Մուրաաին և Դլճեանին, որովհետեւ ամբողջ մէջ գտնված յեղափոխական սարքը աւելի նրանց հետ էր կապված և գործի ծանրութիւնը այդ երկուսն էին տանում. իսկ նրանց օգնում էր Վոստանը առանց կոմիտէի անդամ լինելու: Ծանազիւրեանը այդ միջոցներին արդէն բանադրված էր և նրա ընկերները գտնվում էին միայն նրա զգացմունքները և ուրիշ ոչինչ. այնպէս որ ծանազիւրեանը աչքի էր ընկնում վր լոկ հերոսական քայլովը. ընկեր-

ները միայն այդ հերոսութիւնը էին աչքի առաջ բերում՝ առանց յեղափոխականին անհրաժեշտ միւս մասաւոր յատկութիւնների մասին խօսելու:

Շուտով և պաշտօնական կնիք պատւիրեցինք: Կնիքը և հաշուեգրքերը ստանալով էին ինձ մօտ՝ ընկերների առաջարկով թեմա:

Կոմիտէի կարգի բերելուց յետոյ, մեր առաջին գործը եղաւ սերբոյիտների խումբ ստեղծել որ շուտով կարողանայինք զուտ յեղափոխական սարքով ազդող քայլերը սկսել: Մեր առաջին դատապարտեալները էին Տաճատ վարդապետ, փաստաբան Սալիկ Էֆէնդի և Մայր եկեղեցու Սուրբիաս քահանան: Դրանք մեղադրվում էին ծանազիւրեանի մասնութեան խնդրում, և առհասարակ Գումդարուի ցոյցից յետոյ ազգայնասիրք բռնած լինելու համար: Ես այցելում էի բոլոր կոմիտէին, որոնք համակրում էին յեղափոխական գործին և աշխատում իմ ուժերի չափ համոզել նրանց որ հայութիւնը միայն և միայն յեղափոխութեան միջոցով պէտք է ազատվի, որից կերպանկարել է: Ընկերավարական սկզբնական քայլեր և զարգացումներ մասին շատ քիչ էի խօսում. միայն հետաքրքրեալներին էի կարողացած չափ բացատրում, որովհետեւ նախ աւել-

լորդ էի համարում մտաւորապէս բուրբուրի անպարտաստ ամբողջ միաքը շեղել մեր իսկական նպատակից, երկրորդ՝ ճշմարտանասած ինքս էլ զեռ ինձ մարտած չէի համարում այնպիսի մի զարդի ուղղութիւնը, որի մասին շատ քիչ բան էի կարողացել և կարողացածներս այնպիսի հեղինակների գրած էին որոնք կամ իրանք լաւ չէին մարտել կամ թէ պաշտօնական հանգամանքները ստիպված չէին կարողացել այդ զարգացումները և սկզբունքները որոշ և յստակ կերպով պարզել, թէ և անձամբ ինքս ինձ սօցիալիստ էի համարում:

Այնու ամենայնիւ աշխատում էի մեզ համակրողներին մէջ հանրամարդկային զգացմունքներ զարթեցնել և թթու շովինիզմը մեղցնել նրանց մէջ, համոզելով որ մենք թէ գերի և թէ ազատ միջոցներն պէտք է եղբայրարար վարվենք մեզ հարեւան կամ մեզ հետ ապրող ժողովրդների հետ:

Մի քանի օրից յետոյ ընկերներին առաջարկեցի որ Արփիարեանի խումբակը վերջապէս համաձայնեց երկու հաւատար ձայներով և հաւասար պատասխանատու ընկերներ տալ, միայն այն պայմանով որ մեզինց էլ միայն երկուքը նրանց հետ միանայ, որով և մեր կողմից երեք հոգի էինք լինելու ինձ հետ միասին:

(Շարունակելի)

և իր հերոս ընկերները իրենց մօտ կը պահեն որպէս զի իրենք ալ վարակուին նոյն ախտով :

Մատրիտէն Լոնտոնի ճամբով հասած ոչ պաշտօնական հեռագիրներ կը տեղեկացնեն թէ ըմպանիոյ ժողովուրդը փողոցները խռնուած՝ փոխանակ «պատե-րա՞ղմազազակելու», «խաղաղութիւն» կը պոռայ : Շատ մը նահանգներէ ժողովուրդը հանրագիրներով կը պահանջէ կառավարութեանն որ ի գին ամէն զոհողութեան՝ զազրեցնեն պատերազմը : Կառավարութիւնը պատրաստ է կատարելու ասոնց պահանջը, եթէ միւս կողմէ չը վախճայ Վէյլէրի կուսակցութեանն, որ մինչև վերջին շունչը պատերազմի կուղէ :

Անցեալ օր միթիւնիկ մը մէջ հայ մը ըսաւ ամերիկացիներուն. «Ի սէր Քրիստոսի, յանուն մարդասիրութեան և ի յիշատակ ձեր անմահ հերոսներուն, ձեր Մանիլայի յաղթական նաւատորմիդ թող տուն չը վերադառնայ առանց ճամբուն վրայ Պոլիս հանդիպելու ու մարդասպան թուրքի մայրաքաղաքին վրայ զոյգ մը ռումբ նետելու, օ՛հ, այո՛, զոյգ մը ռումբ պիտի սողացնէ այդ հրէջը և պիտի շնորհէ հայ ազգին ալ ազատութիւնը Քուպայի ու Փիլիպպինս ժողովուրդներու հետ :

Թ. Չ.

Ինքսեանք, 27 Յունիս

Յունիս 25ին տեղւոյս հայ գաղթականութիւնը ուրախութեամբ ներկայ գտնուեցաւ եկեղեցիին առընթեր կառուցանելի ազգ. վարժարանին հիմնարկէքի արարողութեանը : Ժողովուրդեան խուռն ըրագմութեան մէջ կը գտնուէին նաև կառավարական մէջ երկու պաշտօնականներ, որոնք մասնակից եղան ժողովուրդին ուրախութեանը՝ իրենց կարճ բայց սրտազոյգ ատենախօսութեամբ : Ներկայ էին նաև տեղւոյս պատուաւոր վաճառականներէն Ֆրերնկիւսի եղբայրները, որոնց մէջը 5000 ֆր. գումար մը նուիրած է վարժարանին շինութեանը համար բացուած հանգանակութեան :

Վարժարանին հիմնարկէքին թըւականը եւ որոնց օրով կառուցուած ըլլալն յիշատակող թուղթ մը մասնաւոր շին մը եւ ապակեպատ ամանի մը մէջ գրուելով՝ թաղուեցաւ շէնքին հիւսիս արևմտեան անկիւնը, ձեռամբ ճարտարապետ Պ. Զաքար Պողոսեանի :

Սակայն նիւթական շէնքին կառուցումը անշուշտ չի բաւեր կրթական խնդրին լուծմանը. հարկ է ունենալ նպատակադարձ ուսուցիչ մը, փորձառու եւ հմուտ : Թաղխորհրդի անդամները պէտք է մէկդի վանեն տիրացու վարժապետ ունենալու գաղափարը. ինչ հարկ դաստիարակութեան գործը չփոթիլ և կեղեցիկ երգեցողութեան հետ :

Ինչպէս ձեռքի հայ գաղթականութեան յոյժ մեծ այս պակասը անալիզուելու վրայ է ալ երիտասարդու-

թեան կը մնայ ուժ տալ կրթութեան գործին, լսարան մը եւս հաստատուելով այդ կրթական յարկին մէջ :

Սպասենք եւ յուսանք :  
Փօղ ձիկրեան

ՏՈՎԱՅԻՆ ԱՂՈՒՆԻ ԱՐԿԱՏ

—)(—

Լրագիրները հեղինակէ քսամեկի մանրամասնութիւններ կը բերեն Պոլսոյն շոգեհատին ընկղմելուն վրայ զոր համառօտակի ծանուցած էինք նախորդ թիւով :

Անխուսափելի մահուան այդ անմիջական մեղադրումին մէջ է որ կեանքի ընտղը պարզուած է իր ամենէն ստոր եւ արհամարհելի ձեւերուն տակ : Իրաւ է որ վիճանքն թեան շքանաղ զեղումներ ալ չեն պակասած այդ անարկի ամբողջ մէջ, եւ մինչև վերջին րոպէն, զերազոյն վարկեանը, իրենց պաշտօնին վրայ անվեհեր մնացողներ եղած են :

Այս վերջիններուն մէջ է Տըլօնքը նաւապետը, զո՞ւ մը իր պարտականութեան :

Այդ անոնի արկածէն ազատողները ուղեւորներու ամօթալի արարքները կը պատմեն : Այրերը կը կոտէին նաւակներու մէջ տեղ բռնելու համար. անոնք բռնի ուժով կը հրմշտկէին եւ կը կոխտէին կին ու մանկիկ : Բազմաթիւ կիներ եւ տղաքներ նաւակի մը մէջ մտած էին. բայց եւ ոչ մէկ բազուկ բարձրացաւ նաւակը ծով իջնցնելու, եւ երբ շոգեհատը ընկղմեցաւ, բոլոր մէջը պատասխանողները խղճուեցան : Վերայարկելի վրայ ճամբորդները գանակներ կը ձօձէին կիներու եւ երախաներու վրայ : Չրի վրայ պատահած տեսարանները ալ աւելի վայրագ եւ ամբողջ եղած են : Դանակի եւ ուրիշ զէնքերու միջոցաւ է որ լսատներու եւ նաւակներու վրայ մագրելով ուղղողները արգիլուած են : Ականատեսները կը յայտարարեն թէ բոլոր մեղադրողները խեղդուելով մեռած չեն, այլ սպանուած եւ բոնի կերպով ծովը թափուած :

Վերջին վարկեանները ամենէն զարհուրելիները եղած են : Ուղեւորները փրկութեան գօտիներ կը փնտռէին. ուրիշներ կամուրջին վրայ կը խուժէին պաղատելով որ նաւակներուն մէջ տեղ մը շնորհուի իրենց : Նոյն պահուն կիներով լիցուած նաւակ մը ծովամայն կը ըլլար : Շողոմաւին սանդուխները առցուած էին կիներով որոնք մահուան կամեր կը բարձրացնէին. եւ իրենց ամուսիններուն կը պլլուէին յուսահատութեան սրտաճմլիկ շարժումներով : Ոմանք կը խնդային, ուրիշներ կաղթէին, եւ կային ալ որ խնդեցան՝ կամաւ ծովը կը նետուէին : Առաջին կարգի ուղեւորները նաւակներու մօտ խնդուէլ առաջ, ծովը կալէր կը սրբէր կամուրջը, եւ, նաւին ընկղմած պահուն, չփոթ խոռանակութիւն մը տեսնուեցաւ կիներու եւ այրերու որոնք պողպատեղով կը տապալակէին նաւակներու շուրջը :

Կրիստոսի սպանները կըսեն թէ ըստ ուղեւորները եւ նաւատիրները անոնի տեսարան մը կը ներկայացնէին երբ որ ընդունուեցան Քրիստոսի շուրջը : Շատերը հազուապէս մը հազած էին ու ամէնքն ալ նօթի էին քսան եւ չորս ժամի վեր :

—)(—

ԱՐՄՈՒՆԵԱՆ ՎԱՐՔԱՐԱՆ

—)(—

Յունիս 30ին դպրոցական հացկերոյթ-հանդէսէ մը ետքը Արծրունեան վարժարանը իր երկրորդ տարեկանը բոլորեց ազգին նուիրելով իր անդրանիկ հունձքը, երեք հատ ընթացաւարտներ :

Արուսեակ Արեւեան Վառնացի Փեփրոնէ Գալէնտիւրեան Ակնցի Երեւակ Քիւրքեան Պոլսեցի ի պատիւ այդ երեք աւարտականներուն արուած սեղանը, ծովեզրեայ պարտէզին մօտ հանգրուան մը եղաւ, փոշոտ եւ արեւոտ ճամբուն ծայրը, ուր ուսուցիչ, ուսուցչուհի եւ աշակերտները համախմբուած՝ տարուան մը յոգնութիւններն մոռցան :

Իրաւցնէ այդ սեղանը հանդէսի մը փոխուեցաւ, որ առիթ տուաւ շարք մը բանախօսութիւններու եւ բաժակաճառերու : Առաջին անգամ վարժարանին Տնօրէնն իր խօսքը ուղղեց աւարտականներուն, նախ յայտնելով այն անխառն բերկրանքը, որ ունէր իր աշխատակից ուսուցիչներուն հետ : աշխատութեամբ պսակուած գործի մը վրայ, եւ յետոյ գծելով այն պարտականութիւնները որ մարդ ունի իր սունչն սկսելով զէպ իր ազգութիւնը եւ հայրենիքը, եւ զէպ ազգութիւններ եւ հայրենիքներ :

Տնօրէնէն յետոյ խօսեցան ուրիշներ որոնց մէջ յիշատակելի է աւարտականներէն Օր. Արուսեակ Արեւեան որ իր ընկերներուն կողմէն բերանացի շնորհակալութիւն յայտնեց Տնօրէնին եւ ուսուցիչներուն այն խնամքներուն համար, որ երկու տարի արուեստը իրենց մտքի եւ սրտի մշակութեանը :

Երգերու մէջ վերջացաւ սեղանը, երեք ժամուան տեսողութեամբ, թողլով այն անուշ ազատութիւնը ու այն ներքին գոհունակութիւնը, որ մարդ կուենայ լուսազոյն գործ մը կատարած ըլլալու գիտակցութեան մէջ :

Արծրունեան վարժարանը, իրրեւ մասնաւոր հաստատութիւն մը, ինծի կը թելադրէ սա քանի մը սողերը :

Անոր Հիմնադիր-Տնօրէնը՝ Հրանդ՝ մեր դաստիարակութեան եւ գրականութեան գործին մէջ ազգայինին ու ժողովրդականին ստեղծողներէն ու ներկայացուցիչներէն է եղած, եւ Պոլսոյ մեր ամէն զասակարգէն առհասարակ յարգուած ու սիրուած զէմքերէն մէկն է, եւ ու պրոցիներէն ու ստուներէն փնտռուած :

Երկու տարի առաջ շատերու հետ ինքն ալ ստիպուած ինքզինքը գրտաւ այս հիւրընկալ հողին վրայ. եւ առանց վնասելու, իր ուժերուն վստահ շարունակից իր սիրած ու փայփայած գործը, հիմը գնելով Արծրունեան վարժարանին, ի յիշատակ իր պաշտած Գրիգոր Արծրունիի :

Վարժարանը՝ որ հակառակ շատ մը դժուարութիւններու եւ խօչնդոտներու կը շարունակէ մնալ, սահմանուած է կարեւոր դեր մը կատարելու Պոլսկարիոյ հայութեան մէջ :

Մեր շնորհաւորութիւնները յարգելի անօրէնին որուն փորձառութիւնը եւ անուշը երաշխիք են ազգային դաստիարակութեան մէջ արդիւնքի եւ այն ոգիին որուն այնքան պէտք ունի մեր սարսամ օրերուն մէջ :

Տ.

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Վանի պարսկական նախկին հիւպատոս հայասէր Միրզա-Հիւսէին խան, որ վերջերս Սալմաստի սափարաստ էր, մօտերս աւելի բարձր պաշտօնի հասեր է, կառավարիչ կարգուելով Մակուի, Խոյի եւ Սալմաստի : Երաշխիք մը որ այսուհետեւ այդ տառապեալ գաւառակը այլեւս պիտի հանգարտի :

—Թիֆլիսի բնակչաց թիւը 1897 թուականին 162,624 էր, որուն 95,914ը այր եւ 66,710 կին : Ազգութեան համեմատ սապէս կը բաժնուին. հայ՝ 61,688, ռուս՝ 30,606, վերացի՝ 33,421, իսկ մնացեալները ի մերէլ, լեհացի, գերմանացի, թուրք պարսիկ, հրեայ եւ այլն :

—Պոլսի Պէշիկթաշ թաղը Լեւոն Ալթունեան անուն հայ երիտասարդի մը գիւղը գտնուի է գլուխը մարմինէն անջատուած ու ձեռքերը կտրուած : Թուրք թերթերը կըսեն թէ երիտասարդը անձնասպան եղած է եւ թէ շունչը կտրած են գլուխը, իբր թէ մարդու կերպարանքով գլուխ կտրող շունչը պակաս ըլլային հոն :

—Տոպրիչի թաղապետութիւնը կը ծանուցանէ թէ երկրաչափի մը պէտք ունի նոյն քաղաքին համար : Տարեկան թոշակն է 4,200 ֆր. պէտք եղած վկայագրով գիմել վերոյիշեալ թաղապետութեան

—Աթէնքի մէջ յանձնախումբ մը կազմուած է նպատաներ հաւաքելու Քուցուֆլիանի գիւղին բնակիչներուն, որոնք, Թուրքիոյ թողուած իրենց գեղը այրելէ ետքը հեղինական հողը ապաստանած են իրենց նախնեաց ոսկորներն ալ մէկ տեղ տանելով :

—Բարիգի լրագիրները կը ծանուցանեն թէ Նուպար փաշան վերաբուժական ծանր գործողութիւն մը կրեր է : Հիւանդութիւնը ստամոքսային քաղցկեղ է : Գործողութիւնը թէեւ յաջողած է, բայց հիւանդին յոտաջացեալ տարիքին պատճառով, երկար ատենի կը կարօտի րամբողջական ապաքինումը :

—Պոլսոյ մէջ ըլլուած քաղաքի վաճառումն ալ նիթաւ տը քաղաքին պէս վաճառող վաճառման օրէնքին պիտի ենթարկուի իր պարունակած գիւրարորդք նիթերուն պատճառով :

—«Պուրկօյն» ընկղմած շոգեհատին կամուրջին վրայ կիներու եւ երախաներու զէմ զանակ շարժող սրիկան Եուսուֆ բեհիւլանն է եղեր զոր Սուլթանը վերջերս յատկապէս Ամբրիկա դրկած էր այն տեղի ըմբիշներուն հետ շափուելու : Ծաւկատագրային է ուրեմն որ թուրքին վատութիւնը ամէն պարագայի մէջ, թէ ցամաքի եւ թէ ծովու վրայ պարզուի եւ միշտ տկարներու խոչնդիչը հանդիսանայ . . . :

—Պրանսաի Երեսփ. ժողովին մէջ պատերազմական նոր նախարար Պ. Բալէնեաք Տրէյֆուսի խնդրին առթիւ երկար ճառ մը խօսելով հաստատել ուղեց անոր յանցաւորութիւնը : Թէեւ այս ճառին տպաւորութիւնը մեծ եղաւ, սակայն այս հուշակաւոր դատին վերաբնութիւնը պահանջող մամուլը կը շարունակէ իր ընդդիմադիր ընթացքը՝ պողտով որ Պ. Բալէնեաք ստոյգ փաստերու վրայ հիմնուած չէ :

—)(—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ինչպէս կերելի մեր այսօրուան լուրերէն, խաղաղութեան դաշտերը սկսած է թեւածել պատերազմի գաշտերուն վրայ: Սպանիա, ա'լ հոգեւայառ, կը զգայ խաղաղութեան անհրաժեշտ պէտքը, բայց կուզէ միշտ պատուարապէս օձիքը քաշել հանել նոյն իսկ ջախջախիչ պարտութեան մը բեռան սակէն: Ասոր համար անհրաժեշտ էր որ Սակասթայի նախարարութիւնը, որուն կը վերագրուին աններելի սխալներ, ելլար գործին մէջէն ու տեղի տար աւելի հաշտարար ու երկրին բարեբը խորհող վարչութեան մը:

Հիմակ պատերազմի . . . ծովին վրայ միահեծան կը տիրէ Ամերիկա, ջախջախած ըլլալով թշնամիին բոլոր ուժերը: Սպանիոյ յետին յոյժ՝ Բամարաի նաւատորմն ալ աճապարանքով ետ կը դառնայ, փոխանակ երթալու Փիլիպպեաններուն պաշտպանութեանը: Սպանիա անմիջապէս հաշտութիւն չընելու մէջ յոյս կամ պատրուակ ունի, այն է իր Բուպարի հզօր ու ստուար բանակը զոր նուաճելու համար, կըսէ ինք, առ առաւելն երկու տարի հարկ է, առանց հաշտելու որ խիստ պաշարման մը տառապանքը շատ աւելի քիչ ժամանակուան մէջ կրնայ զէնքի ու թնդանօթի գործը լրացնել:

Այսպէս թէ այնպէս, կերեւայ որ պատերազմը, որ արդէն բաւականէն աւելի աղէտալի եղաւ, մտա է իր վախճանին, հակառակ քասթիլեան պոռոտ ու սնամէջ յայտարարութիւններու:

Մատրիտի արտաքին գործոց նախարարը կը հերքէ այն լուրը թէ խաղաղութեան մասին բանակցութիւններ սկսած են: Ընդհանուր կարծիքն է թէ նախարարներն անհամաձայն են խաղաղութեան նկատմամբ: Երկու նախարար հակառակ են խաղաղութեան, երկու նախարար ալ կուսակից, իսկ Պ. Սակասթա և միւս նախարարները անորոշ են:

— Զօրավար Պլանքօ կը պնդէ պատերազմի շարունակման վրայ: Ասկէց զատ, ծերակոյտ և Երեսփ. ժողով զժուարաւ պիտի հաւանին հողային զիջողութեան մը:

— Սէն-Լուի յաճաւորակը, ուր կը գտնուին Սէրվէրա ծովակալն և ուրիշ սպանիացի զերիներ, յունիս 28ին Բօրթաթի հասեր է: Սէրվէրա քիչ մը տենդէ կը տառապի:

— Բամարա ծովակալը նաև կը ատարած էր դառնայ՝ պաշտպանելու համար մայր հայրենիքը ամերիկեան ուժաւորութեանց դէմ:

— Մաք Բինլի որոշեր է բարձրացնել Սամսըն ծովակալին և Շլի քոմսոտրին աստիճանները:

— Յունիս 29ին վերսկսել է Սանթիակոյի ուժաւորումը, որ պահ մը ընդհատուած էր՝ անձնատուութեան համար Շաֆթըրը զօրավարին առաջարկին պատասխան տրուելու համար սպանիացոյց կողմէ: Սպանիացի զօրավարը հաւաներ է պարպել քաղաքը և յանձնել զայն առանց անձնատուր ըլլալու: Շաֆթըրը զօրավար Ուաշինկլթըն հաղորդեր է այս պայմանը, որ մերժուեր է Մաք Բինլիի նախագահէն:

— Յունիս 30ին, ամերիկեան չորս զբաւաւորներ վերսկսել են Սանթիակոյի ուժաւորումը երկու ժամ: Ռուսը մը ինկեր է վառողով ու ռազմամթերքով ի եկեղեցիի մը վրայ, որ ահուելի կերպով սպայթեր է:

— Զօրավար Միլս, ընդհանուր հրամանատար ամերիկեան բանակին, Սանթիակո հասեր է:

— Մատրիտէն կը գրեն թէ խաղաղութեան պայմանները զորս կառավարիկ Միլսից ետև հանդիսները, սրտնք են. Բուպան, Բօրթօ-Ռիքօն և Բանարեաններուն մէջ նաւահանգիստ մը իրենց թողուի: Սպանիա վճարէ մէկ միլիոն երկու հարիւր միլեոն ֆրանք պատերազմական տուգանք: Ասկէց զատ, Մ. Նահանգները իբրև երաշխիք վարդենն Փիլիպպեանները մինչև որ տուգանքը ամբողջութեամբ վճարուի: Այս ծանր պայմաններուն համար է եղեր որ խաղաղութիւնը անհնար կը նկատուի:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական « Էրէքլի » զբօսանաւը հինգօր առաջ ժամանեց Վառնա ուսկից Պուլկարիոյ իշխանն, իշխանուհին և զահագաւանդ իշխանն առնելով Օսեսա պիտի տանի: Սօֆիաի ռուս գեւանադիտական գործակալը Փեթերսպուրկ ուղեւորեր է ուր պիտի սպասէ իշխանական զերգաստանին:

— Յրանտաի երեսփ. ժողովին մէջ Պ. Քօշէն հարցուցեր է Պ. Տելքասէի թէ ինչ եղան հայկական ջարդերու ատեն ֆրանսահպատաներու կրած վնասներու հատուցման խնդիրը:

— Իրան կողմէ չորս տերութեանց ուղղուած շրջաբերականը կը տէտէի այժմու ժողովը, որուն ծովակալները մտադիր են յանձնել կղզիին ներքին վարչութիւնը, կը նկատէ իբրև գումարում մը ապաստամբաց պետերու որոնք տակնու վրայ ըրին կալուածներ, առեւտուր և ճարտարուեստ, խանդարեցին բարեկարգութիւնն ու հանդարտութիւնը կրէտէ կղզիին մէջ և

ամէն տեսակ հարստահարութիւններ ի գործ դրին իրենց իսլամ հայրենակիցներուն հանդէպ:

Շրջաբերականը կը յայտարարէ թէ այս որոշում հակառակ է իրաւունքի և արդարութեան սկզբունքներուն, անհամաձայն այն պահովութիւններուն զորս վեց մեծ տէրութիւնները Իրան տուին գերիշխանութեան իրաւունքներն ու կայսրութեան հողային ամբողջութիւնը յարգելու մասին:

Շրջաբերականը կը յայտարարէ թէ Իրան համար անհնարին է ընդունիլ չորս տէրութեանց որոշումովը սակեղծուած նոր կայսրութիւնը և պատասխանատու չըլլար անկէց առաջ զալիք հետեւանքներուն:

Իրան այս շրջաբերականին իբրև պատասխան, Սալպլըրի մարքիւղը կը յայտնէ թէ չորս տէրութեանց որոշած միջոցները առժամանակեայ են:

— Յրանտական կառավարութիւնը ծանուցեր է օմմ. պանքայի Բարիլի մասնաճիւղին՝ հելլենական պատերազմական սուգանքի վերջին վճարման գումարէն վարդեն 1,200,000 ֆր. ի հաշիւ ֆրանսական պահանջումներու: Իրան հաղորդուած էր այս տընօրինութիւնը, բայց բնաւ չէր կարծեր որ Յրանտա կը գործադրէ զայն:

Ամերիկեան դեսպանն ալ նոյն կարգի տուգանքներու պահանջման համար դարձեալ գիմուսներ ըրեր է Իրան:

Իոհոութեամբ կը ծանուցանենք թէ « Իրաւունք » իմբագիրներէն Պ. Յակոբ Իուրպէթեան որ կառավարական որոշմամբ ասկէց վեց ամիս առաջ դուրս հանուած էր Պուլկարիոյ հողէն, այս օրերու բարձրագոյն հրամանով վերադարձած է Վառնա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—(—)

Պատիւ ունիմ ծանուցանել որ վարժարանս, իր Բ. շրջանը բոլորած ատեն, ազգին կուտայ երեք աւարտականներ:

Արուեսակ Արեւեան Վառնայի Բերթոնէ Գալէնտէրեան Ակնցի Երեւակ Բիւրքճեան Պուսեցի Պատեհ առիթ մըն է ատի շնորհակալ ըլլալու ինձի գործակից ուսուցիչներուն, որոնք իրենց յանձն առած պաշտօնին մէջ, իրենց սիրտը դրին:

Հիմնադիր-Տնօրէն  
Կրտսէն  
2 Յունիս 1898  
Արծր. վարժարան

—(—)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

—(—)

ԵՒՐՈՊԱՅԻ ԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ԹԵՏՈՑ ԳԻՆ 1 ՖՐԱՆԿ

Կը վաճառուի Շարժուելի խմբագրատուներ:

ՊՕՐՍԱ

Վառնա 4 Յունիս

ՊՈՒՂՏԱՅ  
Վազոն եօգ. լիպրա 47—51, հէքթօր. 8—8.20 ֆրանք  
Արապա եօգ. լիպրա 47—55 հէքթօր. 6.50—7 ֆրանք

ԱՐԲԱ  
Լիպրա 43—45 հէքթօր. 4—4.40 ֆրանք  
Առապա մուսուլէսի նարոյէն 21 ֆրանք հիսապը իլէ արբ.  
Կիւնաէ 10—15 արապա արբա, կիւմէքտէ արբ.:

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ  
Մուսալլա, հաճի Հասան աղաի օթէլին տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երևան կելլայ:  
Դիներ գիւրամատչելի:

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶՐՕՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱԿՕՐԻՆ ԶԻՇԴ ԴԷՄԸ  
Կը լսանցուցէ Պ. Տիգրան Թիւֆէկլի-նեան եւ ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովատուն, մաքուր ու գիղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց զարանանային ու ամառնային ժամադրավայր մը ընեն զայն զբօսելու և ճաշելու, Պոնտոսեան ախորժարի հովերուն ու Սիւ ծովի կապոյտ տարածութեան առջիւ:

Հակառակ այս հրապուրելի առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ գիւրամատչելի գիւներ թէ ըմպելիքի թէ կերակուրնեքու մասին:

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա, թահմիլ Կէօղիպէօրիքեանի խանութը, եւ Ապալուրթեանի մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարբանէլեանի քով:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՇԱՐԺՈՒՄ »

—(—)  
Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոման, նամակազուլի, հարսանեկան հրաւիրազիւր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւներ:

Դիներն յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին: